



2015թ հունիսի 24-ին « Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ում տեղի ունեցավ նախապես հայտարարված «Ու՞մ մտքով կանցներ »ինտերակտիվ ներկայացումը,որը նվիրված էր ՄԻԱԿ-ՁԻԱՀ թեմային: Փոքրիկ ներկայացման միջոցով տրվեց խնդիրը մասնակից - հանդիսատեսին առաջարկվեց տալ իր լուծումը, անմիջականորեն մասնակցություն ուենալ ներկայացմանը, լինել գլխավոր հերոսներից մեկը և առաջարկել ստեղծված իրավիճակից դուրս գալու տարբերակը կամ թե ինչպիսի լուծում կտար ինքը ,եթե հայտնվեր նման դրության մեջ:

Այս հանդիպումը նպատակ ունի իրազեկել երիտասարդներին ՄԻԱԿ-ՁԻԱՀ-ի մասին, թե ինչ ճանապարհներով է այն փոխանցվում, ինչպես կարելի է խուսափել վարակվելուց , ինչպիսի կանխարգելիչ մեթոդներ կան , այսօր ինչ դեղորայք է առաջարկվում այս հիվանդության համար ,բուժելի է արդյոք այն և թե ինչպիսին է պատկերը Հայաստանում:

Ներկայացմանը հրավիրվել էին 16-30 տարեկան երիտասարդներ ,որոնք ակտիվորեն մասնակցում էին ներկայացմանը , արտահայտում իրենց տեսակետն ու կարծիքը:Այն անցավ բարձր տրամադրությամբ, բավականին հետաքրքիր, ակտիվ, մասնակիցներն իրենց հարցերն ուղղեցին մասնագետին , որն էլ մեծ սիրով պատասխանեց այս հիվանդությանը վերաբերվող և ներկաներին հուզող հարցերին:

Ինտերակտիվ ներկայացումն իրականացվեց « Փոփոխությունների Թատրոն» ՀԿ-ի կողմից, ծրագրի իրականացմանն աջակցում են USAID, UNFPA, THEATRE for CHANGES , International Center for Human Development -ը:

